



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԵԿԱՆ ԵՒ ԲՆԵԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 24 .

1852

ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 15 .

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Անգղիայ փառապանությունը և մեծագործությունները :

ԼՆԳՂԱՑԻՈՑ ամէն տեղ ունեցած վաճառականութե՛ յարաբերութիւնները , և ամէն ծովերու մէջ բազմաթիւ նաւերով ըրած վտանգաւոր նաւարկութիւնները ամենուն աշխարհաժանօթ բան մըն է . աս նաւարկութեանց պատճառը ուրիշ բան չէ , բայց եթէ աշխարհքէ աշխարհք պտրտելով , ամէն տեղէ Ժողովել ու բեռնաւորել ան մշակական ու հանքային բնական բերքերը՝ որոնք մարդկային ձեռաց ճարտարութեան կարօտութիւն ունին : Ի՞նչոնք իրենց հայրենիքը տանելով հա-

ղարաւոր գործարաններու կը յանձնեն , ուր որ կը շինուին ազգի ազգի ձեռակերտներ ամէն տեսակ նիւթերէ . վերջը նոյն ձեռագործներն ու ապրանքները նորէն նաւ լեցընելով կը ցրուեն ամէն քաղաք ամէն աւան ու ամէն գեղ ալ . որով կրնանք ըսել որ աշխարհքիս վրայ նաւահանգիստ մը չկայ , որչափ ալ խեղճ ըլլայ՝ ուր տարուէ տարի անգղիացի նաւեր չհանդիպին : Իսաճներուս որոշ գաղափար մը տալու համար՝ հարկ է քիչ մը աւելի մանրամասն բացատրենք վերը համալուծութեամբ յիշածնիս , ի-

րենց մեծնալուն սկիզբէն ու պատճառներէն սկսելով :

Բնհաստատվի կրնայ տեսնուիլ մէկու մը՝ որ ուզենայ Բնգղիոյ ասկէ 200 տարի առաջ ունեցած ողորմելի վիճակը հիմնականին հետ բաղդատել . հազար հինգ հարիւրին սկիզբները ասկէ իրեք դար առաջ գեռ այնչափ խեղճ էին նաւարկութեան արհեստին մէջ՝ որ հազիւ կը յանդգնէին ազգիացի նաւերը Բա նիքայի ծովէն անցնելու , որով չկրնալով մօտիկ տէրութեանց նաւահանգիստներն անգամ երթալ , հարկ կ'ըլլար որ օտար ազգաց նաւերու կարօտ ըլլային՝ իրենց կարելոր պաշարը ունենալու համար . վասն զի իրենք հազիւ թէ կրնային Բնգղիոյ նաւահանգիստները միայն երթալ՝ նաւերնուն գէշութեան ու իրենց անվարժութեանը պատճառաւ : Բնգղիացւոց աս աստիճան խեղճութեանը միակ պատճառ կը սեպուի իր արտակերտ դրոն դիրքը , որ մէկ կողմանէ օդին գէշութիւնն ու անբերութիւնը , մէկալ կողմանէ առուտուրի անյարմար կացութիւնը՝ բոլոր մեծնալու ու յառաջանալու ճամբայները կը գոցէր . ասոր վրայ ալ աւելցնելու է վէնետկեցւոց , ճէնովացւոց , սպանիացւոց ու հոլանտացւոց գործունէութիւնը , նաւավարժութիւնը ու հարստութիւնը . որով բոլոր աշխարհքիս վաճառականութիւնը իրենց ձեռքն ըլլալով՝ ուրիշ ազգաց պիտոյքը իրենք կը հոգային . ասով ինչպէս բնական է , ուրիշ ազգերն ալ չէին ջանար յառաջադիմելու : Բայց երբոր Բմերիկան գտնուեցաւ՝ ան ատեն ալ ամենէն մօտ աշխարհքը Բնգղիա եղաւ աս նորագիւտ ցամաքակղզոյն , որով կայարան մը եղաւ Բմերիկայ գացող նաւերուն ու ապրանսաց . և ինչպէս որ յայտնի է՝ Բմերիկոյ ամենաբեր և բազմահարուստ աշխարհքը՝ բոլոր Եւրոպացւոց աչքը ու ակնկալութիւնը իրեն ձգեց . ու իրօք ալ Եւրոպայի ամէն ազգաց հարստութեանսպառ աղբիւր մը եղաւ . որոնց մէջը անգղիացին քան զամէնքը աւելի օգուտ քաղեց , երթալով յարաբերութիւնները աւելցնելուն համար և ճարտար

վարչութիւնը՝ տարբեր բոլորովին սպանիական մեծութենէն ու հարստութենէն , որ քիչ մը ատենի մէջ ալ փճացաւ ու կորաւ : Բնգղիացւոց Բմերիկայի վրայ ունեցած ազդեցութիւններն շատ աւելցաւ . Բրոմուելի դարուն բռնութեանց համար և կրօնական կռիւններու պատճառաւ , որով հազարաւոր մարդիկ ստիպուեցան Բմերիկայ գաղթուելու . ասանկով նոր աշխարհքին մեծ մասը անգղիացւոց ձեռքն էր ու ինչուան 1770 ձեռքերնին էր . ան միջոցին որ հիւսիսային Բմերիկային բնակիչները ապստամբելով նոր տէրութիւն մը հաստատեցին Բիացեալ նահանգք անունով : Բնգղիացիք որ մէկ դիաց Բմերիկայի աշխարհակալութիւններէն մեծ մաս մը կը կորսնցնէին , ուրիշ կողմանէ հնդկաստան նոյնպէս բազմահարուստ երկրակալութեան մը ձեռք կը զարնէին , որ քիչ ատենի մէջ այնչափ մեծցաւ , որ ինչուան հիմա 80 տարուան միջոցի մէջ 135 միլիոն ժողովրդեան տիրեցին , ու անբաւ հարստութիւն Բնգղիա բերին ու կը բերեն . ահա ատենք եղան անգղիացւոց հարստնալուն և վաճառաշահութեան ծաղկելուն առաջին պատճառները :

Բնգղիացւոց հարստութեան ուրիշ էական պատճառ մ' ալ եղաւ շոգէշարժ գործեաց գիւտը . վասն զի գիտեն ամէնքը՝ որ թէպէտ և Բնգղիա ընդհանրապէս աղքատ երկիր է բարեբերութեան կողմանէ , բայց բազմահարուստ է քանի մը տեսակ հանքային նիւթոց կողմանէ , որոնց մէջը ամենէն աւելի առատութեամբ կը գտնուին երկաթ , պղինձ ու հանքային ածուխ , որոնք ամենակարելոր են շոգէշարժ մեքենայից գործածութեան համար , ինչպէս նաև կաղի համար : Հանքային ածուխը ասկէ 100 կամ 150 տարի առաջ չէր գործածուեր , ու անոր համար ալ տարին հազիւ թէ քսան նաւի բեռ հարկաւոր կ'ըլլար , ասկէ 70 , 80 տարի առաջ 150 , 200 նաւ . իսկ այս օրուան օրս՝ որ ամէն տեղ տարածուած է գործածութիւնը շոգէնաւերու շո-

գէկառքերու ու գործարաններու և կազմի համար, տարին 12,000 նաւ ասոր տեղէ տեղ փոխադրութեան համար կը պարտալին, աշխարհքիս ամէն անկիւնը տանելով: Արնան մակարեբել ընթերցողք՝ թէ ինչ սոսկալի մեծ վաստակի ու հարստութեան դուռ մըն է ասիկայ, որուն միայն փորելուն ու հանելուն համար մօտ 200,000 մարդիկ կ'աշխատին. ուսկից որ 6,500,749 տակառաչափ ածուխ կ'ելլէ. իսկ վաստակը վեց եօթը միլիոն յիշերլինի կը հանեն: Այնչ նուազ հարստութիւն կը բերեն երկաթի հանքերն ալ՝ որոնցմէ այնչափ անբաւ մեքենայներ ու գործիքներ կը շինեն որ չբաւեր նիւթը. անոր համար

ուրիշ տեղերէ ալ չբանած երկաթ լ'նգղիա կը տանին: Շատ մեծ առատութեամբ կ'ելլէ լ'նգղիայէն պղինձ, աղ, կապար, սրննցմէ տարին միայն 50,000,000 գորակի աղ կ'ելլէ. որուն 40 միլիոնը օտար երկիր կը խաւրեն: լ'նգղիոյ մեծ փարթամութեան աղբիւրներէն մէկն է բամպակի ձեռագործները՝ որոնց ազգ մը չկրնար հաւասարիլ. ասոնց աշխատաւորները 500,000էն աւելի կ'ըլլան: Հոս կը գնենք ցուցակ մը 1848, 49, 50 տարիներուն մէջը մտած և ելած վաճառուցը, տէրութեան մաքսատան հաշիւներէն հանելով:

Մտած վաճառք		Գործարանի ապրանք ու բերք գուրս ելած		Օտար ապրանք ելած
1848	90,921,866	1 իր սթէրլին	126,130,986	40,036,160
49	93,547,134		132,617,681	18,368,113
50	105,874,607		164,539,504	25,561,890

Ինչպէս որ որոշ կը տեսնուի զրած ցուցակներէս, տարի տարուան վրայ ըզգալի տարբերութիւն կայ աճման լ'նգղիայէն ելած բուն տեղացի ապրանքաց վրայ. 1849էն 6 միլիոն իրէ յիշերլին տարբերութիւն կայ, որ ըսել է 660,000,000, զուռուշ. իսկ 1850էն 38 միլիոն յիշերլինէն աւելի, որ ըսել է 4,180,

000,000 միլիոն զուռուշ: 1850 տարին լ'նգղիոյ ամենէն յաջող տարիներէն մէկը եղած է. գուրս ելած վաճառքներուն մէջը ամենէն մեծ գումարները են բամբակէ ու բրդէ ձեռագործները: Հոս ցուցակ մը կը գնենք 1849էն գուրս ելած ապրանքաց, ուսկից որոշ գաղափար մը կրնայ ստացուիլ.

Զգեստեղէն	772,200	Սթէրլին արժէքով.	Մեքենայներ	700,500
Մետաղէ աման	2,570,000		Զտած շաքար	593,000
Բամբակ	100,000,000		Մետաքսեղէն	1,434,500
Դանակ պողպատ	10,818,000		Գործած անագ	726,200
Հիւսած բամբակ	13,300,000		Կանեփի կտուր	14,902,080
Լաթ	6,910,000		Կանեփի թել	985,600
Դերձան	085,500			

Իսկ ներս մտած վաճառքները ելածին համեմատութեամբ աւելի քիչ են, բաց ուտելեաց պաշարէն՝ որ միշտ անհամեմատ առաւելութեամբ կը մտնէ և գրեթէ բան չելլէր. հոս նոյնպէս 1849 մտած ուտելեաց ցուցակը կը գնենք. 28,981 եզ ու ցուլ մտեր է. 17,757 կով. 19,754 հորթ. 137,646 ոչխար. 5,852 գառն. 7,287 խոզ. ամբաւ. քանակութիւն ապրիլ տեալ միս. 1,341,683 կենդինար գետնախնձոր. 105,761,995 հաւկիթ եւ 7,969,435 գրիւ արմաիք և ընդեղէն.

3,873,908, գրիւ ալիւր. ասկէ քիչ շատ գաղափար մը կրնայ մէկը ունենալ թէ ինչ սոսկալի պաշար կը մտնէ լ'նգղիա, ու որչափ բան կը սպառի: Խիստ մեծ է շաքարի, թէյի ու ծխախոտի վաճառականութիւնն ալ. աս տեսակ վաճառքներէն 1849 առ հետեւեալ չափերով շաքար, չայ ու ծխախոտ եկեր է: լ'նգղիացւոյ լ'մերիկայ ունեցած կալուածքներէն 2,584,162 կենդինար. օտար տէրութիւններէ 1,566,752 կենդինար չլտած շաքար. Սաւրիտիայէն կամ

որ նոյն է Վաղղիոյ կղզիէն, 1,003,000, կենդինար լընէիւն չնդկաստանէն 1,343,000 կենդինար նոյնպէս աղտոտ : 10,645, կենդինար զտած շաքար անգղիացւոյ կալուածքներէն . 505,054 կենդինար ալ սև շաքար : 50 միլիոն սթէրլինի արժէքով թէյ, Չինաստանէն, Ռուսաստանէն և ուրիշ տեղերէն : 33,874,506 լիւր . սթէրլինի ծխախոտ լընէիւն, լընէիւն և ուրիշ այլ և այլ տեղերէն : Տաղարաւոր տակառ գինի Վաղղիայէն, Բարեյուսոյ գիւնէն և ուրիշ տեղերէն :

Վաղղիայի . Նիգղիացիք ամէն ազգերէ աւելի նաւ ունին ծովու վրայ, այսինքն 30,000էն աւելի առագաստաւոր նաւ, ու 1184 շոգենաւ, որոնք կը նաւարկեն աշխարհքիս ամէն ծովերուն մէջ . ամէն տարի աս թիւս տեւնալու վրայ է նոր շինուած նաւերուն պատճառաւ . 1848ին 847 . նոր նաւ եւեցաւ աս երեսուն հազարին վրայ, որոնք 122,000 տակառաչափ բեռ կը բովանդակեն . 1849ին 730 նաւ 117,000 տակառաչափ բեռ տանող . 1850ին 689 նաւ 133,000 տակառ : Սկսեալ 1850ին աւելի քիչ եղած են նոր շինուած նաւերուն թիւը, բայց հանդերձ այսու ամենայնիւ, իրենց կրած բեռը քան զնախընթաց տարիները աւելի եղած է, որով կ'իմացուի որ երթալով մեծ կը շինեն նաւերը՝ որ յառաջադիմութիւն ու հարստութեան նշան մը կը սեպուի : — Տարին գրեթէ 30,000 նաւ միայն Նիգղիոյ վաճառականութիւնը համար կը գործածուին, այսինքն Նիգղիայէն ուրիշ տեղեր թալ ու նորէն հոն դառնալու համար . որոնցմէ ոմանք կրկին անգամ դառնալով մօտ տարին 45,000 նաւ Նիգղիոյ նաւահանգիստները կը մտնեն կ'ելլեն : 1849ին որ աւելի քիչ եղած է հասած նաւերուն թիւը՝ այսու ամենայնիւ 34,000 նաւ մտեր է Նիգղիա . որոնցմէ 20,000, անգղիացի դրօշակով, մնացածը ուրիշ ամէն ազգէ . 1851ին առջի վեց ամսուան մէջ 15,000 մեծ նաւ մտեր է Նիգղիոյ նաւահանգիստները, որ ձմեռնային եղանակին համար աւելի քիչ

կ'ըլլայ . իսկ ամառնային եղանակին մէջ՝ երրորդ մաս մը աւելի ենթադրելու է, որով կ'ըլլայ 40,000 : Սերի ըսած 30,000 անգղիացի նաւերուն մէջ՝ 300,000 էն ց350,000 նաւաստի կայ . իսկ 1180 շոգենաւաց մէջն ալ վրայէ վրայ 28,000էն 30,000 հոգի : Լը 1184 շոգենաւերէն 333 ընտոյի նաւահանգրտին համար են, 100՞ իւրփուլին, 88՞ Վէսկոյի, 85՞ Վիուքսթիլին, և մը նացածներն ալ այլևայլ նաւահանգրտներուն : Լը շոգենաւերուն մէջ իրեք չորս հարիւրը այնչափ մեծ են՝ որ լըլան տեան ուկիանոսը անվտանգ կրնան անցնիլ ու լըլան կամ լըլիանիա երթալ . ասոնցմէ հարիւր և քսան շոգենաւ՝ 1000 տակառաչափէն աւելի բեռ կը տանին, ու 700էն ինչուան 1100 ձիու ուժ ունին : Լընէն արագընթացները կը սեպուին անգղիացւոյ ու ամերիկացւոյ շոգենաւերը, որոնք առ հասարակ տամէն ինչուան տասուերկու օր կը դնեն լըլան կայէն ինչուան լըլիոյ օր իրեք հազար մղոնէն աւելի է :

Նիգղիա մասնաւոր օրագիր մը հաստատուած է աս վերջի տարիներս՝ որ վաճառականութեան օրագիր կ'ըսուի, որն որ աշխարհքիս ամէն վաճառաչաքաղաքները գործակալներ ունի, որոնց պարտքն է շուտով մը իմացընելու որ և իցէ վաճառականութեան վերաբերեալ լուրերը :

Նիգղիացւոյ ամենատարած վաճառաչութեան ու նաւարկութեան կրնայ պատճառ մը սեպուիլ, ինչպէս որ է ալ ամէն տեղ ունեցած հիւպատոսին, որոնք մէկիկ մէկիկ համրելը խիստ երկայն կ'ըլլար . բայց գոնէ վերի վերանց ու ընդհանրապէս գաղափար մը ստանալու համար, հոս կը դնենք միայն () սմանեան տերութեան մէջ ունեցած հիւպատոսները՝ իրենց դրամական հասոյթն ալ դիմացը նշանելով, իմացընելու համար թէ ինչ մեծամեծ ծախքեր կ'ընէ վաճառականութեան և իր ժողովրդեան դիւրութեանը համար : Տաճկաստան ամէն տեղէ աւելի շատ ունի, մէյմը խիստ շատ յարաբերութիւններ

ունենալուն համար . մէյ մ' ալ տաճկի տէրութիւնը դեռ ինչպէս որ պէտք է կանոնաւորեալ չըլլալուն համար :

	Լիւր . Սթէրլ .
Պաղտատ	800
Պուքրէշ	900
Իպրայիլ	200
Եաշ	700
Կալայ	250
Ճանինա	550
Փոխան հիւս . անդ	400
Փրէվէզա	70
Շկոտուա	130
Կոստանդնուպօլիս	1000
Փոխան հիւսպատոս	400
Տարաանէլի	300
Թեսաղոնիկէ	300
Ագրիանուպօլիս	200
Էնոս	40
Պուրսա	300
Իզմիր	800
Փոխան հիւսպատոս	200
Ատալ	100
Մետիլինէ	200
Գիոս	80
Հուդոս	200
Կրետէ	300
Էրզրում	600
Տրապիզոն	200
Պաթում	200
Ղայսերի	400
Սամսուն	200
Տարսոն	260
Մուսուլ	250
Ասորիք	1,600
Դամասկոս	600
Հալէպ	500
Աղէքսանդրիա	300
Պէյրութ	500
Կիպրոս	400
Երուսաղէմ	550
Եգիպտոս	1800
Աղէքսանդրիա	650
Փոխան հիւս . անդ	300
Գահիրէ	300
Տամիէթ	60
Թրիփոլի	1600
Փոխան հիւս . անդ	300
Պէնկագի	400
Թուշուզ	1600
Փոխան հիւս . անդ	350
Սֆաքս	300

22,640

և շինաստանիները , ուր որ հինգ հիւսպատոս կայ հինգ ազատ քաղաքներուն մէջ : որոնց վճարմունքը խիստ առատ ըլլալուն՝ հինգին միատեղ տարին 28,000 իրէ Սթէրլին է . իսկ մնացած հարիւր վաթսուներկու մօտ 80,000 իրէ Սթէրլին է : Իսոնցմէ զատ քսանը հինգ ալ դեսպան ունին գլխաւոր մայրաքաղաքներուն մէջ՝ որոնց տարեկան վճարքն է 160,000 իրէ Սթէրլին :

Հազարաւոր միլիոններ ծախած է Լ'նգղիան նաւարկութեան դիւրութեւն վաճառականութեւ համար . 1755էն սկսեալ ինչուան հիմա հազար անգղիական մղոն ջրանցքներ բացած են , որոնց մէջ խիստ երեւելի է Վալէտոնեան ըստածը՝ որուն լայնութիւնն է ջրին երեսէն 122 ոտք , յատակը 50 , խորութիւնը 20 , մեծամեծ ջրվէժներով : Լոյսպէս խիստ համաւաւոր են լճերնէլ ըստած կամարակապ ճամբայները որ վաթսուների չափ կան՝ որոնց համար միլիոններ խարճուած են :

Շատ մեծագործ են Լոնտրայի , Լիվրփուլի , Պրիսթլի , Նորլի , ու Լիա սի շտեմարանները , որ հարիւրաւոր միլիոնի արժէք ունին : Լ'նգղիայ նաւահանգիստներուն մէջ ամէն հարկաւոր եղած տեղերը փարոսներ շինուած են , և աս վերջերս ալ դեռ նոր որոշեց տէրութիւնը շատ մըն ալ շինելու . ան աստիճան մեծագործ են անգղիացիք աստեսակ շինուածքներու մէջ , և անանկ ճարտարութեամբ ու մեքենականութեամբ կը շինեն՝ որ ազգ մը իրենց չկրնար հաւասարիլ այսօրուան օրս , որն որ աւելի լաւ կ'իմացուի երբոր ժաւմանակին ուրիշ տէրութեանց վրայ ալ խօսեւոր ըլլանք :

Հ . Հ . Թ

Թիւպէտ և ուրիշ տէրութեանց մէջ նոյնչափ բազմութեամբ հիւսպատոս չունի , ինչպէս Տաճկաստան , այսու ամենայնիւ 160 հիւսպատոս ունի բոլոր աշխարհք , 'ի բաց առեալ վերի գրածնիս